Արձանագրություն № 2
գնահատող հանձնաժողովի նիստի

| 1. Տվյալներ պատվիրատուի, ընթացակարգի (ծածկագիր), ապրանքների, աշխատանքների, ծառայությունների ձեռք բերման, նիստի անցկացման մասին | |
|---|---|
| Պատվիրատու | *«ՀԱԷԿ» ՓԲԸ* |
| Գտնվելու վայրը | *ՀՀ Արմավիրի մարզ, ք.Մեծամոր* |
| Ընթացակարգի ծածկագիրը | *<<ՀԱԷԿ-ԳՀԱՇՁԲ-16/17>>* |
| Ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի, ծառայության անվանումը | ***««ՀԱԷԿ» ՓԲԸ ներհրապարակային (L=1715,3մ) երկաթուղային գծերի անձնագրի կազմում՝ ներառյալ գեոդեզիական հանույթի իրականացում, երկայնական պրոֆիլների կառուցում և անձնագրի հաստատում»*** աշխատանքներ |
| Նիստի անցկացման վայրը | ք.Մեծամոր, <<ՀԱԷԿ>> ՓԲԸ վարչական շենք, 136 սենյակ |
| Նիստի անցկացման օրը և ժամը | 27 օգոստոսի 2017թ. ժամը 11:00 |
| Նիստի անցկացման նպատակը | Հայտերի բացում |

| 2. Տվյալներ նիստին ներկա հանձնաժողովի կազմի, մասնակիցների կամ նրանց կողմից լիազորված ներկայացուցիչների մասին | | |
|---|---|---|
| Հանձնաժողովի նախագահ | Ա. Գրիգորյան | ԳԲ 2-րդ կարգի ճարտարագետ |
| Հանձնաժողովի անդամներ | Մ. Գաբոյան | ՇՇԲ պետ (գնահատող) |
| | Տ. Եփրեմյան | ՇՇԲ ճարտարագետ (գնահատող) |
| | Ա. Պողոսյան | ՇՇԲ պետի տեղակալ (բացող) |
| | Գ. Մարգարյան | ՖՏԲ առաջատար տնտեսագետ (բացող) |
| Քարտուղար | Ա. Ղազարյան | ԳԿԲ գլխավոր մասնագետ |

| 3. Տվյալներ գնման անհրաժեշտության, գնման ձևի ընտրության հիմնավորման, ձեռք բերվող ապրանքի, աշխատանքի, ծառայության նախահաշվային գնի վերաբերյալ | |
|---|---|
| Հանձնաժողովի նախագահը հայտարարեց նիստը բացված և հրապարակեց գնման առարկայի ընդհանուր (նախահաշվային) գինը մեկ թվով արտահայտված | 781 200 (յոթ հարյուր ութսունմեկ հազար երկու հարյուր) ՀՀ դրամ |

| 4. Տվյալներ մասնակիցների մասին | |
|---|---|
| Հայտ ներկայացրած մասնակիցների քանակը | 1 |
| Հայտ ներկայացրած մասնակցի անվանումը (անունը), էլ.փոստը | <<Տրանսնախագիծ>> ՓԲԸ, transproject@mail.ru |

| 5. Տվյալներ ներկայացված հայտերի մասին | | |
|---|---|---|
| Տվյալներ ՝ բացված յուրաքանչյուր հայտում հրավերով պահանջվող փաստաթղթերի առկայության մասին | Մասնակցի անվանումը (անունը) | Գնահատվել է (նշել բավարար կամ անբավարար: ) |
| | <<Տրանսնախագիծ>> ՓԲԸ | **Անբավարար**, կցված չէ ընթացակարգին մասնակցելու դիմում՝ հավելված N 1 |
| Ընդունվեց որոշում՝ | Կողմ - 5 | դեմ - 0 : |
| Տվյալներ՝ յուրաքանչյուր մասնակցի ներկայացրած փաստաթղթերի՝ հրավերով սահմանված պայմաններին համապատասխանության կարգված լինելու մասին | Մասնակցի անվանումը (անունը) | Գնահատվել է (նշել բավարար կամ անբավարար: ) |
| | <<Տրանսնախագիծ>> ՓԲԸ | **Անբավարար**, գնային առաջարկ հավելված N 4-ում գնման ենթակա աշխատանքի անվանումը **««ՀԱԷԿ» ՓԲԸ ներհրապարակային (L=1715,3մ) երկաթուղային գծերի անձնագրի կազմում՝ ներառյալ գեոդեզիական հանույթի իրականացում, երկայնական պրոֆիլների կառուցում և անձնագրի հաստատում»** *աշխատանքների փոխարեն գրված է* **««ՀԱԷԿ» ՓԲԸ ներհրապարակային (L=1715,3մ) երկաթուղային գծերի գեոդեզիական հանույթի իրականացման, երկայնական** |

| | | |
|---|---|---|
| | | **պրոֆիլների կառուցման և հաստատված անձնագրի կազմման»** *աշխատանքներ:* Համաձայն ՀՀ Կառավարության 04 մայիսի 2017թ. թիվ 526-Ն որոշման 40-րդ կետի 4-րդ ենթակետի <<Հայտերի բացման նիստում հանձնաժողովը մերժում է այն հայտերը, որոնցում բացակայում են գնային առաջարկը և (կամ) հայտի ապահովումը կամ եթե դրանք ներկայացված են հրավերի պահանջներին անհամապատասխան: Գնումն էլեկտրոնային համակարգով իրականացվելու դեպքում հիմք է ընդունվում համակարգում կցված՝ մասնակցի կողմից հաստատված գնային առաջարկը>>. |
| Նկատի ունենալով, որ մասնակցի կողմից գնման էլեկտրոնային համակարգում կցվել է հրավերի պահանջներին անհամապատասխան գնային առաջարկ (չի համապատասխանում գնման ենթակա աշխատանքի անվանումը) հանձնաժողովը որոշեց ՀՀ Կառավարության 04 մայիսի 2017թ. թիվ 526-Ն որոշման 40-րդ կետի 4-րդ ենթակետի հիմքով մերժել <<Տրանսնախագիծ>> ՓԲԸ-ի հայտը և ընթացակարգը հայտարարել չկայացած: | | |
| Ընդունվեց որոշում՝ | Կողմ - 5 , դեմ - 0 : | |

Հանձնաժողովի նախագահ՝ __________ Ա. Գրիգորյան

Անդամներ՝ __________ Մ. Գաբոյան

__________ Տ. Եփրեմյան

__________ Ա. Պողոսյան

__________ Գ. Մարգարյան

Համակարգող քարտուղար՝ __________ Ա. Ղազարյան